Կոմունալ ձեռնարկության կողմից տարեկան հաշվետվության ներկայացնելը

Լեյղան ԼաՌոկա, Կոմունալ ձեռնարկությունների գլխավոր վերլուծաբան

IUB-ին տարեկան հաշվետվությունն ներկայացնելը

Այովա նահանգում կոմունալ յուրաքանչյուր ձեռնարկություն Այովա նահանգի հանրային ծառայությունների խորհրդին մինչև յուրաքանչյուր տարվա ապրիլի 1-ը պարտավոր է ներկայացնել տարեկան հաշվետվություն: Հաշվետվությունում պետք է արտացոլվի ձեռնարկության նախորդ օրացուցային տարվա ընթացքում իրականացված գործունեությունը: Եթե օրացուցային տարվա ընթացքում կոմունալ ձեռնարկությունը դադարեցնում է իր գործունեությունը միաձուլման կամ էլեկտրակայանի վաճառքի պատճառով, այս գործարքում ներգրավված կոմունալ ձեռնարկություններից յուրաքանչյուրը պարտավոր է ներկայացնել մինչև միաձուլման կամ վաճառքի ամսաթիվը ծածկող տարեկան հաշվետվություն: Նման դեպքում հաշվետվությունը պետք է ներկայացվի միաձուլմանը կամ վաճառքին հետևող 90 օրվա ընթացքում:

Տարեկան հաշվետվությունն ամբողջությամբ պետք է ներկայացվի Այովա նահանգի հանրային ծառայություններին խորհրդին Փաստաթղթերի ներկայացման էլեկտրոնային համակարգի (EFS) միջոցով: Խորհրդի գրառումների և տեղեկատվության կենտրոնի կողմից «ընդունվելուց» հետո գրանցման ենթակա բոլոր փաստաթղթերը գրանցվում են Խորհրդի գործադիր քարտուղարի գրասենյակում: Ընկերությունների կողմից ներկայացվող կոնտակտային տվյալներն ու էլ.փոստի հասցեները պետք է լինեն գործող:

Հաշվետվության ձևի յուրաքանչյուր էջը պետք է լրացվի և ներկայացվի Այովա նահանգի հանրային ծառայությունների խորհրդին: «Չկա» և «չի կիրառվում» բառերը կարող են օգտագործվել ձևը լրացնելու համար այն դեպքում, եթե դրանք ճշգրտորեն և ամբողջովին արտացոլում են փաստերը: Բոլոր հաշվետվությունները պատրաստվում են՝ Այովա նահանգի հանրային ծառայությունների խորհրդի կողմից հաստատվելու համար:

- Կոմունալ յուրաքանչյուր ձեռնարկություն օգտագործում է ընկերության լրիվ անվանումը և ընկերության նշանակված համարը:
- Կոմունալ ձեռնարկության հասույթը չպետք է թաքցվի հասարակության հսկողությունից, քանի որ այն հրապարակվում է որպես Խորհրդի կողմից կատարված գնահատման մաս՝ Այովա նահանգի օրենսդրության § 476.10-ի պահանջներին համապատասխան:

Տարեկան հաշվետվությանը ներկայացվող պահանջները

Խորհրդի անձնակազմը յուրաքանչյուր տարվա հունվար ամսին էլեկտրոնային նամակ է ուղարկում կոմունալ յուրաքանչյուր ձեռնարկության, որը պետք է տարեկան հաշվետվություն ներկայացնի: Այս նամակը պարունակում է ինտերնետային հղումներ դեպի այդ տարվա ընթացքում կիրառվելիք տարեկան հաշվետվության ձևը (ձևերը): Որպես հիշեցում նախատեսված այս գործընթացն անհրաժեշտ է, քանի որ ձևերը փոխվում են ամեն տարի: Երբեմն տարեկան հաշվետվությունների ձևերում կատարվում են զգալի փոփոխություններ, սակայն տարեց տարի մեծ փոփոխություններ հիմնականում չեն կատարվում:

Խորհրդի կանոնները վերաբերում են տարեկան հաշվետվություններում պարունակվող տեղեկություններին ներկայացվող որոշակի պահանջներին: Խորհուրդն օժտված է իրավասությամբ և ճկունությամբ՝ անհրաժեշտության դեպքում պահանջելու այլ կամ լրացուցիչ տեղեկություններ: Օրինակ, Խորհրդի նոր կանոններ ընդունելուն պես դրանց մեջ կարող են ընդգրկվել տարեկան զեկույցին վերաբերող պահանջներ: Խորհրդի անձնակազմը փորձում է ներառել այս պահանջները գոյություն ունեցող տարեկան զեկույցներում: Այլ դեպքերում Խորհրդին անհրաժեշտ է լինում փոփոխել իր տրամադրության տակ գտնվող տեղեկությունները, ինչի համար պահանջվում է ներկայացնել լրացուցիչ տեղեկություններ: Որպես տարեկան հաշվետվությունում նման փոփոխության օրինակ կարող է ծառայել այն օրինակը, երբ կարգավորվող սակագին կիրառող էներգետիկ կոմունալ ձեռնարկությունների կողմից էլեկտրակայանների վերաբերյալ տեղեկություններ տրամադրվում էին, իսկ այն ձեռնարկությունները, որոնց սակագինը չէր կարգավորվում, չէին տրամադրում նման տեղեկություններ: Խորհրդի անձնակազմի կարծիքով, այս տեղեկությունները պետք է հետևողականորեն ներկայացվեն Այովա նահանգը սպասարկող էներգետիկ բոլոր ձեռնարկությունների կողմից: Արդյունքում, Խորհրդի անձնակազմը ներառել է կարգավորվող սակագին կիրառող էներգետիկ կոմունալ ձեռնարկությունների կողմից ներկայացվող տեղեկությունների վերաբերյալ ձևերի փոփոխված տարբերակը քաղաքապետարանին պատկանող և գյուղական վայրերում գործող էներգետիկ կոոպերատիվների տարեկան հաշվետվությունների ձևերում:

Տարեկան հաշվետվության ձևեր

Ստորև ներկայացված են հղումներ ներկայումս օգտագործվող՝ 2010 թվականի տարեկան հաշվետվության ձևերին:

Կարգավորվող սակագին ներկայում կիրառող և կարգավորվող սակագին նախկինում կիրառած կոմունալ ձեռնարկություններ

- Էներգետիկ կոմունալ ձեռնարկություններ՝ Չև IE-1 և FERC Չև1
- Կարգավորվող սակագին կիրառող գյուղական էներգետիկ կոոպերատիվներ՝ Չև EC-1 (Word) կամ Չև EC-1 (Excel)
- Բնական գազի կոմունալ ձեռնարկություններ՝ Չև IG-1 և FERC Չև 2

Կարգավորվող սակագին չկիրառող կոմունալ ձեռնարկություններ

- Քաղաքապետարանի սեփականություն հանդիսացող էներգետիկ ձեռնարկություններ՝ Չև ME-1 (Word) կամ Չև ME-1 (Excel)
- Քաղաքապետարանի սեփականություն հանդիսացող բնական գազի կոմունալ ձեռնարկություններ՝ Չև MG-1 (Word) կամ Չև MG-1 (Excel)
- Կարգավորվող սակագին չկիրառող գյուղական էներգետիկ կոոպերատիվներ՝ Չև EC-1 (Word) կամ Չև EC-1 (Excel)
- Էլեկտրաէներգիա արտադրող և հաղորդող կոոպերատիվներ և գործակալություններ՝ Չև EC-1N
- Բնական գազի սերտիֆիկացված մատակարարներ՝ Չև CNGP-1: Բնական գազի սերտիֆիկացված մատակարարների համար նախատեսված տարեկան զեկույց լրացնելու հրահանգներին ծանոթանալու համար այցելեք Բնական գազի սերտիֆիկացված մատակարարների վեբ-կայքը:

Տարեկան հաշվետվություններում պարունակվող տեղեկությունները տարբեր կիրառություն ունեն: Տեղեկություններն օգտագործվում են մեր անձնակազմի, պետական այլ գործակալությունների, կոմունալ այլ ձեռնարկությունների, ինչպես նաև հասարակության կողմից: Նոր խնդիրների առաջ գալու դեպքում, տեղեկությունների այլ աղբյուրներ ուսումնասիրելու և ստուգելու համար հասանելի են անցյալ տարիների ընթացքում կուտակված տարեկան հաշվետվությունների տեղեկությունները:

Ամեն տարի տարեկան հաշվետվությունների միջոցով ներկայացված տեղեկությունների հիման վրա կազմվում են հետևյալ հաշվետվությունները՝

- Հաշվետվություններ եկամուտների, վաճառքների և սպառողների կարգերի վերաբերյալ:
- Տեղեկություններ Բողոքների լուծման գործընթացի ծանուցման վերաբերյալ:
- Տեղեկություններ Էներգետիկ աջակցության հիմնադրամների ծանուցման վերաբերյալ:
- Տեղեկություններ Սպառողների ներդրումների հիմնադրամի ծանուցման վերաբերյալ:

- Տեղեկություններ արտաքին լուսավորության մասին:
- Տեղեկություններ չպահանջված սեփականության մասին:
- Հարկման ենթակա եկամուտ՝ ուղղակի հարկման և մնացորդի հարկման նպատակով:
- Էներգետիկ և Գլոբալ տաքացման կենտրոնների հարկվող եկամուտներ:

Վերոնշյալ հաշվետվությունները կազմվում են կոմունալ բոլոր ձեռնարկությունների կողմից տարեկան հաշվետվություն ներկայացնելուն պես կամ, եթե դեռ ոչ բոլոր կոմունալ ձեռնարկություններն են ներկայացրել հաշվետվությունները, հունիս ամսվա վերջին: Այն կազմակերպություններին, որոնք, սկսած ապրիլի 1-ից, 30 օրվա ընթացքում չեն ներկայացնում տարեկան զեկույցը, ուղարկվում է խախտում կատարելու մասին նամակ՝ ընկերության կոնտակտային հասցեով: Նամակում, համաձայն Այովա նահանգի օրենսդրության § 476.51-ի, նշվում է, որ ձեռնարկությունը ծանուցվում է Խորհրդի որոշակի կանոն խախտելու մասին: Նամակն ուղարկելու ամսաթվից 30 օրվա ընթացքում 199 IAC 23.1(2)-ի պահանջները չկատարելու դեպքում, կոմունալ ձեռնարկությունը կարող է ենթարկվել քաղաքացիաիրավական տուգանքի՝ յուրաքանչյուր խախտման համար 100 դոլարից ոչ պակաս չափով: Պահանջներին համապատասխանելու համար հատկացված ժամանակը սպառվելուց հետո, խախտման յուրաքանչյուր օր համարվում է առանձին և հստակ հանցանք: Տարեկան հաշվետվության ներկայացման պահանջներին չհամապատասխանելու համար քաղաքացիաիրավական տուգանքի մինչ այժմ ենթարկվել է կոմունալ ընդամենը մեկ ձեռնարկություն:

Օգտակար հղումներ՝
Այովա նահանգի օրենսդրության գլուխ 476՝
http://www.legis.iowa.gov/DOCS/ACO/IC/LINC/Chapter.476.pdf
Այովա նահանգի վարչական օրենսգրքի գլուխ 23՝
http://www.legis.state.ia.us/aspx/ACODocs/ruleList.aspx?pubDate=9-7-2011&agency=199&chapter=23

Ստորև ներկայացված աղյուսակում նշված են տարեկան հաշվետվությունների միջոցով ներկայացված տեղեկությունների հիման վրա կազմվող հաշվետվությունների տեսակները, կոմունալ ձեռնարկությունների թիվը, որոնց վերաբերվում են այդ հաշվետվությունները, և գործընթացը կամ հաշվետվությունը կարգավորող իրավական ակտը՝

Տվյալների տարեկան կազմումը		IAC 199-23.1(2)
(Եկամուտներ, վաճառքներ և սպառողներ կարգերի)		
(1) Մասնավոր կոմունալ ձեռնարկություններ		
(ա) Էներգետիկ	2 ձեռնարկություն	
(բ) Բնական գազի	4 ձեռնարկություն	
(2) Քաղաքապետարանին պատկանող		
(ա) Էներգետիկ	136 ձեռնարկություն	
(բ) Բնական գազի	53 ձեռնարկություն	
(3) Գյուղական էներգետիկ կոոպերատիվներ (REC)	49 ձեռնարկություն	
(4) Բնական գազի սերտիֆիկացված մատակարարներ	18 ձեռնարկություն	
Բողոքների լուծման գործընթացի ծանուցում		IAC 199-19.4(1)*I* և 20.4(2)
(ա) Էներգետիկ	187 ձեռնարկություն	
(բ) Բնական գազի	57 ձեռնարկություն	
Էներգետիկ աջակցության հիմնադրամների ծանուցում		IAC 199-19.4(15)*g* և 20.4(15)*g*
(ա) Էներգետիկ	187 ձեռնարկություն	
(բ) Բնական գազի	57 ձեռնարկություն	
Սպառողների ներդրումների հիմնադրամի ծանուցում		IAC 199-19.15(3) և 20.15(3)
(ա) Էներգետիկ	187 ձեռնարկություն	
(բ) Բնական գազի	57 ձեռնարկություն	
Արտաքին լուսավորություն		IAC 199-35.15(2)
(ա) Մասնավոր էներգետիկ	2 ձեռնարկություն	

(բ) Քաղաքապետարանին պատկանող էներգետիկ	136 ձեռնարկություն	
(գ) Գյուղական էներգետիկ կոոպերատիվներ	49 ձեռնարկություն	
Չպահանջված սեփականություն		ԱՅՈՎԱ ՆԱՀԱՆԳԻ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ § 556
(ա) Էներգետիկ	2 ձեռնարկություն	
(բ) Բնական գազի	4 ձեռնարկություն	
Հարկման ենթակա եկամուտ՝ ուղղակի հարկման և մնացորդի հարկման նպատակով		IAC 199-17.6(476)
(1) Մասնավոր կոմունալ ձեռնարկություններ		
(ա) Էներգետիկ	2 ձեռնարկություն	
(բ) Բնական գազի	4 ձեռնարկություն	
(2) Քաղաքապետարանին պատկանող		
(ա) Էներգետիկ	136 ձեռնարկություն	
(բ) Բնական գազի	53 ձեռնարկություն	
(3) Գյուղական էներգետիկ կոոպերատիվներ	49 ձեռնարկություն	
Էներգետիկ և Գլոբալ տաքացման կենտրոնների հարկվող եկամուտներ		IAC 199-17.7
(ա) Մասնավոր էներգետիկ	2 ձեռնարկություն	
(բ) Քաղաքապետարանին պատկանող էներգետիկ	136 ձեռնարկություն	
(գ) Գյուղական էներգետիկ կոոպերատիվներ	49 ձեռնարկություն	